ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՄԱՆ

N 331 -Ա

Ք.Արտաշատ

«06» դեկտեմբեր 2024թ.

<<ՍՊԱՍԱՐԿՈՒՄ 2022>> ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Գնումների մասին>> օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Արարատի մարզպետի աշխատակազմի կողմից կազմակերպված ՀՀԱՄ-ԲՄԱՇՁԲ-2024/01 ծածկագրով բաց մրցույթին <<ՍՊԱՍԱՐԿՈՒՄ 2022>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված մասնակցության հայտը մրցույթի 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով նվազագույն գնային առաջարկը (3-րդ չափաբաժին) չի համապատասխանել հրավերի պահանջներին, մասնավորապես.

- գնման ընթացակարգի դիմում – հայտարարությունը ստորագրված չէ
- գնման ընթացակարգի գնային առաջարկը ստորագրած անձի լիազորագիրը բացակայում է
- 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով գնային առաջարկի և Ձև 5,8,9 և 11 ձևաչափերի գները և հաշվարկները չեն համապատասխանում միմյանց:

ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի համաձայն՝գնահատող հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով նիստը կասեցնել և ծանուցել <<ՍՊԱՍԱՐԿՈՒՄ 2022>> ՍՊԸ-ին՝ առաջարկելով սահմանված ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: 29.11.2024թ. կայացած նիստի թիվ 4

արձանագրությամբ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ <<ՍՊԱՍԱՐԿՈՒՄ 2022>> ՍՊԸ-ի կողմից վերոնշյալ ոչ մի փաստաթուղթ չի շտկվել և չի ներկայացվել:

<< կառավարության 2017թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկում է նշված ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը :

Պատվիրատուն արձանագրում է, որ <<ՍՊԱՍԱՐԿՈՒՄ 2022>> ՍՊԸ-ն իր կողմից գնման ընթացակարգի 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով իր հայտով ներկայացված փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունները սահմանված ժամկետում չշտկելով՝ խախտել է գնման գործընթացի շրջանակում իր կողմից ստանձնած պարտավորությունը, որը հանգեցնում է գնման գործընթացին ընկերության հետագա մասնակցության դադարեցմանը և գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու :

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

<<ՍՊԱՍԱՐԿՈՒՄ 2022>> ՍՊԸ-նի ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ստորագրող
ԱՐԹՈՒՐ ՄԿՐՏՉՅԱՆ
3414870525

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ 2024-12-06 12:27:05 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից
Ա.ՄԿՐՏՉՅԱՆ